ՄԱՔՈՒՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԻԶՆԵՍ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր նրանք, ովքեր բնակվում են Հայաստանում և ունեն մաքուր տեխնոլոգիաներին վերաբերող բիզնես գաղափարներ, նախատիպեր և արտադրանք: Բիզնես գաղափարները և նախատիպերը պետք է վերաբերեն հետևյալ ոլորտներին՝

- ✓ **Էներգաարդյունավետություն**
- ✓ **Վերականգնվող էներգիա**
- ✓ **Թափոններից էներգիայի ստացում**
- ✓ **Ջրային ռեսուրսներ**

Հավաքագրված բոլոր գաղափարները կգնահատվեն հատուկ հանձնաժողովի կողմից. ընտրված լավագույն 25 գաղափարների հեղինակները կշարունակեն մրցույթը մասնակցելով՝

- 3 օրյա ինտենսիվ բիզնես դասընթաց
- Թեմատիկ դասընթացների շարք (մարքեթինք, բիզնեսի կառավարում, վաճառք, ապրանք/տեխնոլոգիա գնահատում)
- Մենթորների և մասնագետների հետ անհատական աշխատանք
- Բիզնես գաղափարները բիզնես մոդելների վերածում
- Բիզնես մոդելների նախնական ներկայացում և հանձնաժողովի կողմից գնահատում

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

Հոկտեմբերի 9-10-ին մասնակիցները ժյուրիին կներկայացնեն իրենց բիզնես մոդելները: Լավագույն **4 բիզնես մոդելները** կստանան մինչև **10,000 ԱՄՆ դոլար մրցանակ**, իսկ հաղթողը նաև կմասնակցի **Սիլիկոնյան հովտում կայանալիք Cleantech Open** – ի կոմից կազմակերպվող ամենամյա բիզնես ֆորումին: Այս տարի ծրագիրը նաև խրախուսական **2,000 ԱՄՆ դոլար** պարգևներ կտրամադրի կին մասնակիցներին:

Ինչպես դիմել մրցույթին՝

Մասնակցության հայտը կարող եք ներբեռնել հետևյալ հղումով՝ հայտ/հայերեն հայտ/անգլերեն: Լրացված հայտը ուղարկեք հետևյալ էլ-հասցեին cleantech.armenia@unido.org: Այլ մանրամասների համար զանգահարեք՝ 099 10 20 83; 077 00 83 14:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մայիսի 10-ը:

Մրցույթն իրականացվում է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ) կողմից իրականացվող Մաքուր տեխնոլոգիաներ ՓՄՁ-ների և սկսնակների համար գլոբալ ինովացիոն ծրագրի շրջանակներում: